




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»

**ՅԵՐԿՐԱՅԻՆ
ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ՄԱՍՍԱՆԵՐԻՆ**

ИНСТИТУТ
ИСТОРИИ
ЛЕНИНИЗМА
СССР

1. ԿՈՆՏԵՍՏԱՆՏԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ. ՉԿԿ (Բ) Շ. ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐԱՅԻՆ, ՅԵՐԿՐԳՈՐԾԿՈՍԻ ՅԵՎ. ՅԵՐԿՐԿՈՆՏԱՆՍՏԻՆՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ.
2. ԽՈՇՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ-ԳԻԳԱՆՏՆԵՐԻ ՄԱՆՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ. ՉՅՈՒՍ. ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐԶՈՂՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՅԵՎ. ՅԵՐԿՐԿՈՆՏԱՆՍՏԻՆՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ.
3. ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ. ՉԿԿ (Բ) Շ. ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐԿՈՍԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ.

338-1

Հ-69

338.1
32-1
A 216

ՅԵՐԿՐԱՅԻՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ—ՄԱՍՍԱՆԵՐԻՆ

ԿՈՆՏՆՏԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐԴՉԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՐԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

БИБЛИОТЕКА
ИСТОРИКА
ИСКУССТВ
Академии Наук

ՀԿԿ(ք) Հ.-Կավկասի Յերկրգործկոմի յեվ Յերկրկոմի
սնտխության վորոշումը

Կոլտնտեսությունների նոր մեծ հաջողությունները—
ցանքատարածությունների զգալի ընդլայնումը, հատկապես
տեխնիկական բույսերի, անասնապահական ապրանքային
ֆերմաների ընդարձակ ցանցի կազմակերպումը, կոլտնե-
սական ղաշտերի բարձր բերքը համեմատած անհատական-
ներին, մթերումների պլանների իրագործումը հիմնականում,
արտադրանքի ու յեկամտի բավական աճը—հանդիսանում
են նրանց կազմակերպչական-տնտեսական ամրացման հե-
տևանքը: Մեքենա-Տրակտորային կայանների աշխատանքի
ծավալումը, գործավարձի և աշխատանքի հաշվառքի ներ-
մուծումը, յեկամտի բաշխումը միայն աշխորի համաձայն,
պայքար հացամթերումների պլանի իրականացման համար—
ընդգեծ մասն սեփականատիրական տրամադրությունների և
կուլակային աղբեցության թափանցման կոլտնտեսությունում—
ահա այն հիմնականը, վորն ապահովեց ընթացիկ տարում կոլ-
տնտեսական շինարարության վերելքն ավելի բարձր առ-
տիճանի: Անցած տարվա փորձն ավելորդ անգամ հաստա-
տեց գործնականում խոշոր, համայնացած ղյուղատնտեսու-
թյան առավելությունն անհատականի հանդեպ:

Սակայն խոշորագույն հաղթությունների հետ միասին
կոլտնտեսությունները դեռ չեն ապահովել աշխատանքի
արտադրողականության այն աճը, վորն անհրաժեշտ և և
հնարավոր և խոշոր համայնացած տնտեսություն պայման-

ներում: Մի շարք կոլտնտեսություններում ակնհայտորեն անբավարար և աշխատանքի կազմակերպումը, ձևական և կիրառվում գործավարձը, լինում են աշխատանքի չեղնելու դեպքեր, բացակայում և աշխատանքի վորակի և ժամկետների հաշվառքը, լծկանի և գյուղատնտեսական գործիքների նկատմամբ դեռ բոլորովին չի վերացած դիմադրությունը, տեղի ունի կոլտնտեսական աշխատանքի ուղղակի ծախսվումը, շատ դեպքերում յեկամուտը բաշխելիս կիրառում են հավասարանքը, կան հացամթերումներին դիմադրելու, հացի հափշտակման փաստեր և մանր սեփականատիրական տրամադրությունների ու կուլակային ազդեցություն ունի շարտահայտություններ: Հենց դրանով են բացատրվում կոլտնտեսների մի մասի բերքահավաքի, ցանքի, աշխատավարի պլանների ուշացումն և անկատարումը, ավելի զգալի կորուստները բերքահավաքի ժամանակ, հատկապես շարքահերկ և տեխնիկական բույսերի, անասնապահության ցածր ապրանքատարողությունը, ագրոտեխնիկական բարելավումների ծայրահեղ դանդաղ ներմուծումը:

Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական հետադա ամբողջման նպատակով ՀԿԿ (Բ) Յերկրկումը, Յերկրործկումը և Յերկրկոլտնտեսությունը վորոշում են—

1. ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵՔԵՆԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ա) 1932 թվի բերքահավաքի կամպանիային կազմակերպել ՄՏ կայաններ յերկրամասի բոլոր խոշոր գյուղերում, վորոնք ընդգրկում են ավելի քան 15—20 հազար հեկտար ցանք և հացահատիկային ՄՏ կայանների պարկը մոտենիկ վոչ պակաս 700 կոմբայն, 1300 ավտոմեքենաներ և 250 պիկերներ:

բ) 1933 թվին ավարտել վաղի, ցանքի, բերքահավաքի մեքենայացումը նախկին կոլտնտեսությունների բոլոր կոլտնտեսությունում:

գ) 1934 թվին ավարտել կոլտնտեսական

գործողությունների մեքենայացումն յերկրամասի բոլոր աշխատանքում և ազգային մարզերում, վորոնք գյուղատնտեսությունում դերակշռում են հատիկային և տեխնիկական բույսերով:

2. ԳԻԳԱՆՏ-ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ՄԱՆՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ա) Նկատի ունենալով առանձնապես խոշոր կոլտնտեսականների աշխատանքներում և կազմակերպման գործում դրսևկորված լուրջ թերությունները—մանրացնել այն կոլտնտեսները, վորոնք մոտավորապես միացնում են ավելի քան 500—600 տնտեսություններ:

բ) Հանձնարարել կոլտնտեսականների մանրացումը կատարել մոտավորապես 250—300 տնտեսություն ունեցող կոլտնտեսների չափ, նայած տնտեսության բնույթին և հողառադործմանը, այնպես վոր կոլտնտեսների չափը հաստատվի իրենց—կոլտնտեսականների ժողովներում:

գ) Պարտավորեցնել տեղական կուլակազմակերպություններին և կոլտնտեսական սիստեմին, ավարտել մանրացման, հողահատկացման և կոլտնտեսների արտադրական պլանների հաստատման աշխատանքները մինչև փետրվարի 15-ը: Պարտավորեցնել մանրացող կոլտնտեսներին, նախապես ավարտել հացամթերումների պլանի իրադործումը և յեկամուսների բաշխումը մինչև հունվարի մեկը հաշվառած աշխատանքային որերի համաձայն: Հանձնարարել Յերկրհողվարչության և Յերկրկոլտնտեսության յիրեք որվա ընթացքում հրապարակել կոլտնտեսների մանրացման կարգի մասին գործնական ցուցմունքներ (գույքի, հաշվեկշռի, հաշիվների, հողացուցումների և նման բաների բաժանման կարգը):

դ) Նոշոր կոլտնտեսների մանրացման ժամանակ մասնադիտացված անասնապահական ապրանքային ֆերմաները կոլտնտեսականների վորոշման համաձայն կամ համապատ-



տասխանաբար մանրացվում են, կամ առանձնացվում են իրեն ընդհանուր միջկոտնտեսական ձեռնարկություններ, վորոնք աշխատում են կոտնտեսությունների հետ կապած հատուկ պայմանագրով, կամ նրանց հիման վրա կազմակերպվում են մասնագիտացված անասնապահական կոտնտեսություն:

ե) Վերացնել ամենուրեք ընտանիքաբերողները, բոլոր կոտնտեսներում կաղմակերպել արտադրական բրիգադներ, բավական մանրացնելով նրանց (մի բրիգադում մոտավորապես 30—40 աշխատողներ): Ամրացնել բրիգադները վորոշ վայրերի, իսկ կոտնտեսականներին—արտադրության վորոշ գործիքների և լծկանի:

3. ԿՈՆՏՆԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՇԱՀԱԽՆԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՇԽԴԻՍՑԻՊԼԻՆԻ ԱՄՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ա) Իրեն հիմնական խնդիր, մնում խմբակային գործավարձի հետագա փաստացի ներմուծումն աշխատանքի բոլոր ապարեզներում և նրա հիման վրա յուրաքանչյուր կոտնտեսականի աշխատանքի գնահատումն աշխատանքի որերով, այսինքն անհատական ուղղակի գործավարձի ներմուծում:

բ) Հաստատել կանխավճար համաձայն գյուղատնտեսական արտելի կանոնադրության, (կոնտրակտացիայի և արտադրանքի իրացումից կոտնտեսությունում ստացված միջոցների 50 տոկոսը)—կոտնտեսականի կատարած աշխատանքի քանակին և վորակին ճիշտ համապատասխան, այնպես վոր կանխավճարը խրախուսի բրիգադի, խմբի, կոտնտեսականի յուրաքանչյուր առանձին աշխատանքը:

գ) Տրակտորիստ կոտնտեսականի յեկամտի ստացման այնպիսի կարգ սահմանել, վորով տրակտորիստն ստանա անմիջապես կոտնտեց կամ մեքենատրակտորային կայանի միջոցով ամսական դրամական կանխավճարից վորոշ քանակությամբ, համաձայն տրակտորի աշխատածի և նրա դրության: Յեկամուտների մթերքային մասը տրակ-

տորիստ-կոտնտեսականն ստանում է իր կոտնտեսությունում վորակավորված կոտնտեսականին հասանելիք մթերքի չափ: ՄՏԿ յուրաքանչյուր 5—6 տրակտորին տալ մի ավագ տրակտորիստ, վորը պատասխանատու լինի տրակտորների աշխատանքի և դրության համար և վորին ՄՏԿ լրացուցիչ վճարի գյուղատնտեսական տարում 200—400 ո., համաձայն տրակտորների աշխատածի և դրության:

դ) Վերակառուցել կոտնտեսական աշխատանքի հաշվառքի սիստեմն այնպես, վոր յուրաքանչյուր առանձին գեպընում հաշվի առնվի աշխատանքի վորակը, որինակ, վարի և ցանքի հեկտարը պետք է տարբեր գնահատվի համաձայն աշխատանքի վորակի. ճակնդեղի, յեզիլպտացորենի, բամբակի հավաքը պետք է գնահատվի համաձայն մթերքի հավաքած փթերի քանակի և այլն:

Իրեն կայուն կարգ, հաստատել արտադրական բրիգադի յուրաքանչյուր աշխատանքի ընդունելը վարչության կողմից (ցանքը ծլումից հետո, քաղհանը—նրա ժամկետները վերջացնելուց հետո, կալսը, նրա վորակի ստուգումն և այլն):

ե) Բրիգադի աշխատանքի ընթացքում արդֆինպլանի նորմաներից ավելի ստացված ամբողջ տնտեսումը (վառելիք, նորոգում, կեր և այլն) հատկացնել տվյալ բրիգադի կոտնտեսականների ոգտին, ըստ հնարավորության տալով այդ տնտեսումն աշխատանքի ընթացքում, առանց ձևասելու աշխատանքի վորակը, գործիքների և լծկանի դրությունը: Հաստատել նախորդ վորոշումը նյութական պարգևատրման կամ բրիգադի յեկամտի պակասեցման մասին բերքի հետևանքի համար, յեթե այդ հետևանքը կախված է յեղել բրիգադի աշխատանքի վորակից:

զ) Պարտավորեցնել Յերկրկոտնտմիության, վերանայել աշխատանքների գնահատումն (աշխատանքային որերով) այնպես, վոր մասամբ սահմանափակվի մշտական պաշտոններում աշխատող կոտնտեսականների և վարչական

անձնավորությունների գնահատումն (աշխտերով), ավելացնելով դաշտային աշխատանքներում աշխատողների յեկամուտը, հատկապես շարքահերկ և տեխնիկական բույսերի վրա աշխատողներին: Անցկացնել նույնպես կոլխոզների մշտական ծառայողների ամենամեծ կրճատում:

բ) Պարտավորեցնել բոլոր յեկամուտների (մթերքային և դրամական) բաշխումը և կոլտնտեսականներին հանձնելն ավարտել վոչ ուշ, քան մինչև փետրվարի մեկը, վճարար հակահարված տալով կուլակային հավասարանք անցկացնելու բոլոր փորձերին յեկամուտը բաշխելիս:

թ) Պարտավորեցնել Յեկրմատակարարին, ավելացնել արդապլանքների ներմուծումը գյուղ և հրատարակել տեխնիկական բույսերի 1932 թ. հանձման համար մթերքներով խրախուսելու կարգը: Պարտավորեցնել Բանգյուղտեսչության, ստուգել Սորհրդային Միության Ժողկոմխորհի 1931 թվի հունիսի 12-ի դեկրետի կատարումը «գյուղատնտեսության յերկարատև արտադրական վարկավորման ֆոնդի կազմակերպման, կոլտնտեսների վարկավորման կարգի փոփոխումների և վարկային սխեմայի հետ ունեցած փախադարձ հարաբերության մասին»:

ժ) Կազմակերպել յերկրամասում վոչ պակաս, քան 1000 կոլտնտեսային խանութներ և կրպակներ, առևտրի համար, թե կենտրոնացած պլանի կատարման և թե նրա գերակատարման հաշվին, կոոպերատիվ կազմակերպությունների գներով: Կենտրոնացած պլանի կատարման հաշվին վաճառելը տեղի յե ունենում միայն ձեռնարկություններում—բանվորներին վորոշված գներով մատակարարելու կարգով և Յեկրմատակարարի ցուցմունքներով: Չարգելել արտադրության անհրաժեշտ միջոցների և մթերքների դրումը պետական գներով կոլտնտեսների իրար միջև—յերբ կոլտնտեսությունը կատարել և ավյալ արտադրանքի մթերման պլանը:

ի) Աջակցել կոլտնտեսական տմենալայն մասսաների

դախաձեռնությանը՝ պատժիչ միջոցներ, մինչև անգամ կոլտնտից դուրս անելը կիրառելու այն անձնավորությունների նկատմամբ, վորոնք քայքայում են կոլտնտային կարգավանությունը, զոդանում են հացը և այլն:

4. ԲԵՐԲԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ա) Կոլտնտեսության գյուղատնտեսական աշխատանքների կենտրոնական խնդիրը պետք է հանդիսանա կոլտնտային աշխատանքի արտադրողականության ընդհանուր բարձրացման հիման վրա այդ աշխատանքների ավարտումը ժամանակին և նրանց վորակի ապահովումը տեխնիկական և ագրոկուլտուրական պահանջների տեսակետից, վորոնք միայն կարող են ապահովել բերքատվության բարձրացումը և իսկական պայքարը կորուստների դեմ:

բ) Պարտավորեցնել տեղական կուսակցական և խորհրդային մարմիններին, անհրաժեշտ բարձրության վրա դրնել պետական գյուղատնտեսական տեսչության աշխատանքը, խիստ պատասխանատվության յենթարկելով ագրոտեխնիկական միջոցառումները քայքայող անձնավորություններին: Պետական գյուղատնտեսական տեսչության կարգադրությունները խորհրտնտեսություններին, ՄՏ կայաններին և կոլտնտեսներին հողի մշակման դիտական միջոցների կիրառման ասպարիզում հանդիսանում են պարտադիր:

գ) Յուրաքանչյուր կոլտնտեսության 1932 թվի արտադրական պլանի կենտրոնական մասը պետք է կաղմն ագրոտեխնիկական միջոցառումները, մասնավորապես առանձին դաշտային աշխատանքների ժամկետները այնպես, վոր ապահովվի հասկային բույսերի բերքի բարձրացումը 16 տոկոս, յեղիպտացորենը 5 տոկոս և արևածաղիկը 20 տոկոս:

դ) Լայն ծավալել 1932 թվին ձյունապահի աշխատանքներն յերկրամասում (600 հազար հեկտար), հաստատել արհեստական լճակների կառուցումը 10 հազար հեկտար տարածության վրա և 680 արտեզյան ու լավացրած ջր-

հորների շինումը: Ընդունել հողաշինարարության (վոռուգ-ման) ծրագիրը 1 միլիոն 100 հազար տարածության վրա (ներառյալ Մանիչ գետը) մոտակա տարիների ընթացքում:

5. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻ-ԱՅԻ ՊԱՏՐԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ա) 1932 թվի հունվարի 15-ից մինչև փետրվարի 15-ն անցկացնել կոլտնտեսների արտադրական և ֆինանսական պլաններ կազմելու միամսյակ: Պլաններ կազմելու ժամանակամիջոցը վաղ միայն պետք է դառնա կոլտնտի տարեկան աշխատանքի յեզրափակման ժամանակամիջոցը, այլև այդ միամսյակում կոլտնտական մասսաների ժողովներում պետք է քննվեն բոլոր գործնական միջոցառումներն առաջիկա գյուղատնտեսական կամպանիայում:

բ) Նպատակ ունենալով ապահովել բանուժով ձեռնարկությունները, շինարարությունները, խորհրտեսությունները և կազմակերպված տնցկացնել արտադնացությունը, պարտավորեցնել նրանց մինչև փետրվարի 1 ներկայացնել իրենց պահանջը բանվորական ուժի համար, իսկ կոլտնտային սիստեմը և կոլտնտներն արտադրական պլանները կազմելիս հատուտ պետք է նախատեսեն արտադնաց բանուժի քանակը և կազմակերպված ու լրիվ բավարարեն արդյունաբերության պահանջները:

գ) Ապահովել յուրաքանչյուր կոլտնտում վոչ ուշ, քան մինչև հունվարի 21 սերմերի լրիվ պատրաստումը գարնանացանի ամբողջ տարածության համար (սերմերի զտումն ու լցնումը հատուկ պատրաստած շտեմանարաններում):

դ) Ցերկրամասի գործարանները արակտորների հորոգման և պահեստի մասերի արտադրման 75 տոկոսը պետք է պատրաստեն մինչև փետրվարի 15-ը և լրիվ ավարտեն մինչև մարտի 1-ը:

Հանձնարարել ցերկր. ԲԳՏեսչության, կազմակերպել սիստեմատիկ ստուգում արակտորների նորոգման և յերկրամասի գործարանների պահեստի մասերի արտադրանքի ըն-

թացքի մասին, պարտավորեցնել հողային մարմիններին, ՄՏ կայաններին և կոլտնտային սիստեմին, վոչ ուշ, քան հունվարի 20 վորոշել յուրաքանչյուր ՄՏ կայանում և կոլտնտում նորոգման յենթակա գործիքների քանակը (գուլաներ, ցանիչներ շարքահերկիչներ, արագհերկիչներ, սայլանիվներ, ձիասարքեր և այլն): Հաստատել յուրաքանչյուր ՄՏ կայանում և կոլտնտում նորոգման որացույցային ժամկետն այնպես, վոր այդ նորոգումը լրիվ ավարտվի վոչ ուշ, քան մարտի 1: Ընտրել յուրաքանչյուր ՄՏ կայանում, կոլտնտում պատասխանատու անձնավորություն (վարչության վորև անդամ) գործիքների նորոգման ընթացքի համար:

ե) Հունվարի ընթացքում ամրացնել կոլտնտականներին այն ձիերին, վորոնց բանեցնելու յեն նրանք 1932 թվի ընթացքում: Գարնանային գյուղատնտեսական աշխատանքների ամբողջ ընթացքում ապահովել կերի անհրաժեշտ քանակություն, ստեղծելով այդ աշխատանքների համար կերի հատուկ անձեռնմխելի ֆոնդ: Ընտրել կոլտնտի վարչության կազմից մի անձնավորություն, վոր հատուկ պատասխանատու լինի լժկանի և կերի ֆոնդերի ողտազորման համար:

զ) Զորահավաքել կոլտնտեսություններում գարնանացանի կամպանիայի պատրաստության համար 1—1 և կես ամիս ժամանակով ամբողջ գյուղատնտեսական մասնագետների 70 տոկոսը, վորոնք աշխատում են քաղաքներում և ուսյոնական հիմնարկներում:

ը) Հաստատել կաթնաապրանքային ֆերմաների, խոզաապրանքային ֆերմաների և ուրիշ անասնապահական ֆերմաների շինարարության հետագա ծավալման պլանը: Հացամթերումների պլանի իրագործումից անմիջապես հետո ուսանանցներ անասունների կանոնավոր կերն ապահովող կերի ֆոնդեր:

թ) Հանձնարարել ցերկրհողվարչության և ուսյործկոմներին, կենդանատեսիսիական տեսչության միջոցով կազմակերպել փետրվարի 1—10 և յերկրորդ անգամ ցանքից-առաջ ամենուրեք լժկանի և կերի ֆոնդերի զրույթյան տառադում:

6. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՍՊԱՐԻՋՈՒՄ

Հունվար-փետրվարի ընթացքում անցկացնել—

ա) Կարճատևվ ռալոնական կուրսեր, ընդգրկելով ամբողջ յերկրամասում վոչ պակաս, քան 3000 մարդ, պատրաստելու և վերապատրաստելու կոլտնտեսությունների նախագահների տեսակի աշխատողներ:

բ) Կարճատև կուրսեր ՄՏ կայաններում, ընդգրկելով վոչ պակաս, քան 40 հազար կոլտնտեսականներ, պատրաստելու և վերապատրաստելու կոլտնտեսությունների արտադրական բրիգադների բրիգադիւրներ:

գ) Տնտեսություն անասնապահական ճյուղերի—կաթի, խոզի, վոչխարի և թռչնապահության սխտեմների ղեկավարների կուրսեր, ընդգրկելով վոչ պակաս, քան 3000 մարդ:

դ) ՄՏ կայաններում ամբողջովին վերապատրաստել բոլոր տրակտորիստներին և պատրաստել տրակտորիստներ վոչ պակաս, քան 3000 մարդ, նույնպես և 2000 կոմբայնավարներ:

7- ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐԱՎԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Գարնանային գյուղատնտեսական աշխատանքները պահանջում են ուժերի զգալի լարում և կոլտնտեսությունների անադին կազմակերպվածություն: Անհրաժեշտ է անմիջապես սկսել այդ ուղղությունում ամբողջ նախապատրաստական աշխատանքը, այսինքն կենտրոնացնել ամբողջ ջանքերը կոլտնտեսների հետագա կազմակերպչական-տնտեսական ամրացման, աշխատանքի լավ կազմակերպման, աշխատանքի կարգապահության բարձրացման, յուրաքանչյուր բրիգադի, խմբի և կոլտնտեսականի աշխատանքում նյութական շահախնդրություն մտցնելու, գործավարձն անցկացնելու իրական պատրաստություն վրա:

Անցկայնել կոլտնտեսությունների վարչությունների վերընտրական կամպանիան և կոլտնտեսությունների ռալոնական համագումարները հունվարի 30-ից մինչև մարտի 1, ծավալելով լայն մասսայական աշխատանք կոլտնտեսություններում և բրիգադներում թե կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման (հիմնա-

լավ ներկա վորոշման վրա), նրանց տնտեսական տարվա տրոյունքների հաշվետվության շուրջը և թե ցանքի կամ պանիայի կոնկրետ հարցերի շուրջը:

Վճռական պայքարով աջ ուղորտունիւտական և կուլակային բոլոր տրամադրությունների դեմ (խակաւան տպրանքայնության թագուտ, յեկամուտների բաշխման համատարանք, մանր բուրժվական վերաբերմունք հասարակական գույքին, իբրև ոտարի, վորը կարելի յե հաիշտակել անպատիժ) և «ձախլիկ» խոտորումների դեմ (խակաւան ղեկավարության և կոլտնտեսային ինքնադործունեության փոխարինումը վարչական հրամաններով և ալն) պեաք և ապահովել կոլտնտեսությունների վերելքն ալելի բարձր աստիճան, մնացած չքավորաւիշակային անհատական տնտեսությունների անցումը կոլտնտեսություն ուղին և կուլակության վերջնական վոչնչացումը:

ՀԿԿ(Բ)Հ-Կովկասի Յերկրկոմի քարտ.
ՇԵՔՈՂԴԱՅԵՎ

Հ-Կովկասի Յերկրգործկոմի նախ.
ՊԻՎՈՎԱՐՈՎ

Հ-Կովկասի Յերկրտնամութ. նախ.
ԼՈՒՉԱՆԻՆՈՎ

ԽՈՐՈՐ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ—ԳԻԳԱՆՏՆԵՐԻ ՄԱՆՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հ. Կովկասի Յերկոդվարչության յեվ Յերկեղոս-
սեհեախության 1932 թվի հունվարի 13 վոռոսումը

1. Մանրացնել մինչև փետրվարի 15 յերկրամասի այն
խոշոր (գիգանտ) կոլտնտեսությունները, վորոնք մոտավո-
րապես միացնում են 500—600 տնտեսություններ: Կա-
սեհեախությունների մասնացումը տեղի յե ունենում նրանց
հացալիքումների սլանի իրագործումից և յեկամուսների բա-
խումից հետո:

Հանձնարարել կոլտնտեսությունների (գիգանտ)
մանրացումը կատարել 250—300 տնտեսությունների ծա-
վալով, կոլտնտեսականների իրենց վորոշման համաձայն:

2. Մահմանել կարգ, վորով գիգանտները մանրացնելիս
նոր կոլտնտեսությունները կազմվում են կոլտնտեսություն-
ների անդամներից, համաձայն նրանց տեղի, բնակավայրի:
Բացառություն կարելի յե թույլ տալ միայն այն կոլտնտե-
սություններին, վորոնք կազմվելով, իրենց մեջ են ընդու-
նում հավասար չափով վորակավորված ուժեր:

3. Ապրանքային անասնապահական ֆերմայի, խոշոր
արդյունաբերական բանջարանոցների, այգիների և խա-
ղողի այգիների և մյուսների նկատմամբ հանձնարարել
նրանց ոգտագործման հետևյալ ձևերը, համաձայն իրենց,
—կոլտնտեսականների վորոշման—

ա) Ֆերմաները մնում են իբրև ընդհանուր միջկոլտըն-
տեսային ձեռնարկություն և ոգտագործվում են կոլտնտե-
սությունների միջև կապված պայմանագրերի հիման վրա:

բ) Ֆերմաների հիման վրա ստեղծվում են մասնագի-

տացված անասնապահական, բանջարանոցային և նման
կոլտնտեսություններ:

գ) Այդ միջկոլտնտեսային ձեռնարկությունները կա-
ռավարելու և տնտեսավարելու կարգը հաստատվում է հա-
տուկ կանոնադրությամբ:

դ) Ֆերմաները մանրացվում են և համապատասխան
կերպով բաժանվում են կազմված կոլտնտեսությունների
միջև այնպես, վոր արտադրանքը հանձնելու կոնտրակտա-
ցիոն պայմանագիրը և կոլտնտեսությունների կենտրոն-
ների հետ կապված ընդհանուր պայմանագրերը համապա-
տասխան չափով անցնեն այդ կոլտնտեսություններին:
Ցանկալի յե մանրացնելիս ըստ հնարավորության առանձ-
նացնել մասնագիտացված կոլտնտեսություններ (անասնա-
պահական, պտղաբանջարեղենի և այլն):

4) Կոլտնտեսությունների մանրացումը կատարվում է
գույքային տվյալների առ 1/32 թ. յեղած վիճակի
հիման վրա:

5) Նոր կազմակերպվող տնտեսությունների ճիշտ
կազմակերպչական-տնտեսական զարգացման և ամրացման
նպատակով հիմնական և շրջանառու միջոցները բաշխվում
են հաշվի առնելով կազմվող կոլտնտեսության բնույթը:

6) Վորպես մանրացման նախապատրաստական աշ-
խատանք, կոլտնտեսությունում ցուցակադրվում են բոլոր
ստացվածքային նյութական և դրամական արժեքները, ի-
րավունքներն ու պարտականությունները և ֆոնդերը,
միաժամանակ զնահատելով բոլոր ստացվածքային և նյու-
թական արժեքները: Ցուցակադրումը կատարում է կոլտըն-
տեսության վարչությունը, արժեքների պատասխանատու
պահողների պարտադիր մասնակցությամբ, ինչպես որինալ
պահեստապետներ, անասնաբակի, կաթնաֆերմաների վա-
րիչներ և այլն:

Բոլոր գյուղատնտեսական մեքենաների, գույքի, շի-
նանյութերի, սարքավորումների, ծառատունկերի, անա-

սաւանների, մթերքների և նյութերի գնահատումը տեղի յե
ռանհետում հետևյալ սկզբունքով—

ա) Բոլոր ստացվածքային և նյութական արժեքները,
լծկան և ցեղային անասունները և մյուսները գնահատվում
են հանձնելու որվա փաստացի արժեքով, վերջ վորոշում և
մանրացման կարգով նոր առաջացող կոլտնտեսությունների
ներկայացուցիչների գնահատու հանձնաժողովը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Նկատի առնելով, վոր մի շարք կոլտնտեսությու-
ններում քաղաքային և գույքի գնահատումը մասիկն տարիներում յեվ վոր
առանձին դեպքերում յեղած գնահատումը չի համապատասխանում արժեքների
իսկական գինն յեվ վոր դրա հետեվանքով հնարավոր և պարտադրագրերի
սխալ բաշխումը նոր կազմակերպվող տնտեսությունների միջիվ, անհրաժեշտ և
գույքը ցուցակագրելիս գնահատումն ամեն 26 յեվ 27 քվերի միջին գներով,
հաշվի առնելով այդ արժեքների փաստացի վիճակը:

բ) Սեփական արտադրության մթերքներն ու նյութերը
—հացահատիկ, կեր, կաշի, միս, ճարպ, աղյուս և այլն
գնահատվում են պետական և կոոպերատիվ կազմակերպու-
թյունների կարգավորած կամ մթերութիւնների գներով:

գ) Տնտեսության անասունների և թռչունների աճող
կամ դաստիարակվող մատաղ սերունդը գնահատվում և կոն-
սերակտացիայի գներով, հաշվի առնելով նրա քաշն ու ցե-
ղային պատկանելությունը:

դ) Նոր կառուցվող շէնքերը և գլխավոր նորոգումները,
թե ավարտված և թե չավարտված, գնահատվում են նախա-
հաշվի համաձայն կամ երոպերտային (փորձագետ) հանձ-
նաժողովի գնահատումով:

ե) Ծառատունկերը, ինչպես որինակ այգիները, խա-
զողի այգիները, պտղատնկարանները, հատապտղաբան-
ները և այլն գնահատվում են իսկական փորձագիտական
արժեքով:

զ) Աշխատանքները գնահատվում և մի հեկտարի կար-
գավորված գնով, աշխատանքների արժեքի համաձայն (աշ-
խորհրի միջին արժեքի, կերի, սերմերի և այլն արժեքի
համաձայն), մեկ հեկտարի համար միջին թվով կարելի յի
հանձնաբարել 15 մինչև 25 ուրլի:

ը) Աշխատվարը գնահատվում և նույնպես կատար-
ված աշխատանքի քանակի և վորակի համաձայն, մի հեկ-
տարը գնահատելով մոտավորապես 7 մինչև 12 ուրլի:

7. Գույքի ցուցակագրումի ավարտումից հետո կազմ-
վում են գույքային արձանագրություններ (գրավումներ)
Հոգեդողումի և կոլտնտեսիկներտրնի Ֆինանսա-արտադրական
ձևերի համաձայն (ձև № 1, 2, 3, 4, 5, 7, 8, 9):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. «Առատւմների արձանագրումը» № 5 ձևով արձե-
քը պետք և ցույց տալ «ով և պատասխանատու» պաշտակում, բաժանելով այդ
պաշտակն 2 մասի կամ նշանակելով անատւմների արժեքն «ուրիշ Ապտոդու-
քումներ» պաշտակում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Կանխիկ մթերքների յեվ նյութերի արձանագրում-
ները պետք և կազմել համեմատական տեղեկագրի ձևով, վոր ցույց և տրված
հավելվածում: Արձանագրումները կազմվում են 2 որինակից վաղ պակաս, ստո-
րագրում են անգամները յեվ պատասխանատու պաշտակները յեվ համեմատ
են մանրացող կոլտնտեսությամ և հաշվետարությամ, հետագա մշակման
կամար:

8. Ներկայացված գույքային արձանագրումները համե-
մատում են կոլտնտեսության հաշվետարական բաժնում
զրքային մնացորդների հետ, համեմատական տեղեկագրեր
կազմելու միջոցով:

9. Համեմատության և ստուգման հետևանքով հայտնա-
բերված՝ ա) ավելին մուտք և զրվում ընթացիկ հաշվի հա-
մապատասխան ձևերով, բ) բնական լրիվ մաշվածության
հետևանքով պակասած գույքը յեղք և զրվում, ընթացիկ
հաշվի համապատասխան ձևերի գրությամը կամ նկատու-
մով:

Պատասխանատու անձնավորությունների անփութ
վերաբերմունքի հետևանքով կորած կամ փչացած գույքի
արժեքը վերցվում և մեղավորների հաշվին, գ) պահելու
ծամանակ որինավոր չափով պակասած մթերքներն ու նյու-
թերը—չորոցում, հոսում, ցրում—զրվում են ծախսի նյութե-
րների զքերում: Վորոշված չափերից ավելի պակաս մթերք-
ներն ու նյութերը զրվում են պատասխանատու պահողների
հաշվին:

10) Արժեքների բաշխումը տեղի յն ունենում հետևյալ կերպով.— ներկայացված գույքային արձանագրումները հիման վրա, մանրացող կոլտնտեսության հաշվետար. բաժինը կազմում է միացյալ գույքային արձանագրում, վորտեղ տվյալ առանձին արձանագրումները մտնում են ընդհանուր գումարներով: Այդ տեղեկագիրը պետք է ծառայի դրամով արտահայտված արժեքների բաշխման վորպես հսկիչ:

11. Հողամասերի, գույքային, նյութական և դրամական արժեքների, իրավադարձականությունների բաշխումը տեղի յն ունենում հետևյալ սկզբունքներով.— ա) յուրաքանչյուր նոր կազմվող կոլտնտեսության հողամասերը տրբվում են համատարած, համախմբված ամբողջությամբ, նոր կոլտնտեսությունների տնտեսական ուղղության և կոլտնտեսության բնակչության բնակավայրի համաձայն, հաշվի առնելով հողագտադործման չափերի համեմատ հողերի գնահատական և կոլտնտեսությունների արտադրության հետագա զարգացումը:

ՕԱՆՈՒՌՈՒՅՈՒՆ.— Նկատի ունենալով, վոր 32 քվի գարծան կամպանիային համատարած հաղթանակը հատկացնելը դժվարանում է յնդած աշնանացանի, աշնանավարի յնվ շարժաներկային հաղափառ յնվ մյուսների հետևվանով, քույ տալ 1932 քվին վորտեղ ժամանակավոր սահմաններ յնվ կոլտնտեսությունների հաղափառ միացնել համատարած ամբողջությունների:

բ) Աշնանացանը և աշնանավարը բաժանվում են առանձնացող կոլտնտեսությունների միջև, նրանց տրված հողային տարածությունների համեմատ:

գ) Արտադրության միջոցները—գյուղատնտեսական մեքենաներ, կահավորում և լծկան անասուն—բաժանվում են նոր կազմվող կոլտնտեսությունների պահանջների համապատասխան, հաշվի առնելով տնտեսության մասնագիտացումը և նրա հետագա զարգացումը:

դ) Կառուցումներն ու սարքավորումներն ըստ կանոնի հանձնվում են այն նոր կոլտնտեսություններին, վորոնց հողամասում նրանք գտնվում են: Սակայն տնտեսական նպատակահարմարության դեպքում կարելի յն թույլ տալ

նոր կոլտնտեսություններին հանձնել առանձին կառուցումներ ու սարքավորումներ, անկախ նրանց գտնվածությունից:

ե) Սերերը բաժանվում են հսկիչ առաջադրությամբ վորտեղ ցանքային տարածությունների քանակի համեմատ: Ապահովագրական սերմաֆոնդերը բաժանվում են առանձնացված սերմաֆոնդերի համեմատ: Կերը բաժանվում է հանձնված անասունների և թռչունների քանակի համեմատ, իսկ կերի ապահովագրական ֆոնդը—առանձնացված կերաֆոնդի համեմատ:

զ) Կոլտնտեսականներին յնկամտի հաշվին կանխավճարով տված պարտքը հանձնվում է այն կոլտնտեսություններին, վորտեղ մտնում են այդ անդամները:

ՕԱՆՈՒՌՈՒՅՈՒՆ.— Հաշվետվարյան յնմբակա գումարների պարտք պետք է անպայման առնվի մանրացման որը:

ը) Արժեթղթերը, արժեհումքերը (որդիքացիտ), նույնպես և կոլտնտեսականներին տրվելիք շահագրավումը բաժանվում են նոր կազմվող կոլտնտեսություններին հասնող ֆոնդերի համեմատ: Տրակտորակենտրոնի ակցիաները—մանրացած կոլտնտեսությունների, մեքենա-տրակտորային կայանների հետ կապած պայմանագրերով ակցիաներ ձեռք բերելու համար 1931 թվին տրված գումարները բաժանվում են հողամասերի համեմատ:

թ) Գյուղատնտեսական մատակարարման պարտավորադրեր ձեռք բերելու համար մանրացած կոլտնտեսություններին տրված գումարները բաժանվում են կոլտնտեսությունների միջև, յուրաքանչյուրին տրված հողամասի համեմատ:

12. Նոր կազմվող կոլտնտեսությունների ընդունած արժեքները, իրավունքները հատուցելու համար ֆոնդերն ու սարքավորությունները թվարկվում են 11-րդ կետի համեմատ հետևյալ կարգով—

ա) Կոլտնտեսությունների անդամների փայերն ու մուտքի վճարներն անցնում են այն կոլտնտեսություններին, վորտեղ նրանք մտնում են:

բ) Անբաժան ֆոնդերը, վոր գոյանում են կոլտնտես-
սությունների անդամների համայնացած գույքի մի մասը
տալով, վերադրվում են այն կոլտնտեսություններին, վոր-
տեղ մանում են այդ անդամները:

գ) Անբաժան և հասարակական ֆոնդերը, ինչպես ու-
րինակ, տարրեր, կոլտնտեսականի ոգնության և կուլտին-
ցադային, վոր կազմվել են 1931 թվի յեկամուտներից, բա-
ժանվում են նոր կոլտնտեսությունները մտած կոլտնտե-
սականների աշխատանքային որերի համեմատ:

դ) Անցյալ տարիների անբաժան ֆոնդը, գրանում
նաե չքավորության կուլեկտիվացման համար անվճար տված
պետական կազմակերպությունների գույքը, միջոցները և
կուլակային գույքի լիկվիդացիայից ստացած արժեքները
բաժանվում են յուրաքանչյուր կոլտնտեսության ստացած
գույքի համեմատ:

ե) Բոլոր վարկերը, վոր ունի խոշոր կոլտնտեսու-
թյունը մանրացման մոմենտին, բաժանվում են նոր կազմ-
վող կոլտնտեսությունների միջև այն գումարի համեմատ,
վորն իրեն գնահատում տվյալ կոլտնտեսության վերադրե-
ված գույքա-նյութական արժեքների և իրավունքների,
անցնում և այդ կոլտնտեսության հանձնված ֆոնդերից,
վորտեղ ցույց են տրված 12-րդ կետի ա, բ, գ, դ, յենթա-
կետերում:

զ) Մուծումները վերադրվում են այն կոլտնտեսու-
թյուններին, վորտեղ մտնում են ներմուծողները:

ը) Տրակտորակենտրոնի ակցիաները 1931 թվին վերջ-
նականապես վճարելու համար խոշոր կոլտնտեսությունների
չվճարած գումարները բաժանվում են նոր կոլտնտեսու-
թյունների միջև բաշխված ակցիաների գումարների հա-
մեմատ:

թ) Յեթե այս կամ այն կոլտնտեսության ստացած
գույքա-նյութական արժեքների և իրավունքների գինը չի
ծածկվում հատկացված ֆոնդերով և վարկերով, այդ կու-

տնտեսությունն ստանում և պակաս գումարի համար այն
կոլտնտեսության պարտամուրհակը, վորն ավելի արժեքներ
և ստացել:

Պարտամուրհակները հանձնվում են Պետական կի-
ժանմունք—հանձնաժողովի արամադրության:

13. Մանրացման և արժեքների բաշխման նախադիժը
հաստատում և Ռայկոլտնտմության, Մեքենա Տրակտորակա-
յանի, դյուդկորհրդի ներկայացուցիչների հանձնախումբը,
վորին մասնակցում են անշատվող կոլտնտեսությունների
ներկայացուցիչները:

14. Մանրացման ժամանակ առաջացող բոլոր վիճելի
հարցերը լուծելու համար կազմվում և հաշտարար հանձնա-
ժողով Ռայհոդբաժնին կից:

15. Համարել մանրացած կոլտնտեսության գործերը
իրավադոր ընդունող այն կոլտնտեսությունները, վորտեղ
կոլտնտեսությունների մանրացման ժամանակ ընդունում
են համապատասխան պարտավորություններ:

Արձանադրման № 7—8 ձևով կազմած ու հանձնված
մուտքի և յեղի պարտքը պետք և հաստատեն պարտա-
պաններն (դերիտոր) ու վարկատերերը (կրեդիտոր):

Պարտքի հանձնելու հետ միաժամանակ մանրացող
կոլտնտեսության վարչությունը պետք և տեղեկացնի իր
պարտապաններին և վարկատերերին այն մասին, վոր
ներանց հաշիվները հանձնված են այսինչ կոլտնտեսության:

16. Ստորագրված արձանադրումների ստանալու հի-
ման վրա հաշվետու բաժնին անում և յեղրափակիչ գրու-
թյուններ ու նկատողություններ մանրացած կոլտնտեսու-
թյան գրքերում և համապատասխան ձևով կազմում և յու-
րաքանչյուր նոր կազմված տնտեսության համար միացյալ
գույքային արձանադրում, վորը գույքային արձանադրման
հետ միասին ուղարկում և նոր կոլտնտեսությունները—մի-
մի որինակ:

17. Մանրացած կոլտնտեսության գոյության լրիվ

գաղարման և փաստացի բաշխման մասին նրա վարչութիւնը կազմում է աւել և ուղարկում է բոլոր նոր կազմված կոլտնտեսութիւնները, ռաւկոլտնտիւթիւթյան, ռայնոլդա-
ժին և Պետքանկ:

Բոլոր գործերը, վրքերը, փաստաթղթերը, միացյալ գույքային արձանագրումը, գույքային ստորագրված ար-
ձագրումը և լիկլիդացիայի արձանագրութիւնն ուղարկ-
վում են ռաւկոլտնտիւթիւթյուն պահպելու:

18. Գարնանացանի նախապատրաստութիւնը ժամա-
նակին ապահովելու և 1932 թվի արտադրական-Ֆինանսա-
կան պլանը վորոշված ժամկետին կազմելու նպատակով
անհրաժեշտ համարել անմիջապէս ընտրել անջատվող կոլ-
տնտեսութիւնների վարչութիւններ, հենց վոր կոլտնտե-
սականները վորոշում են մանրացման և նոր կոլտնտեսու-
թիւնների քանակի հարցը:

19. Կոլտնտեսական մասսաներին խոշոր կոլտնտեսու-
թիւթյան մանրացման աշխատանքին ներգրավելու և այդ աշ-
խատանքը լավ անցկացնելու պայմաններ ստեղծելու նը-
պատակով, ռաւկոլտնտիւթիւթյունների վարչութիւնները
պարտավոր են մանրացող կոլտնտեսութիւններում ծավա-
լել լայն մասսայական աշխատանք, վորի համար անհրա-
ժեշտ է—

ա) Մանրացման նշանակութիւն հարցը դնել կոլտն-
տեսականների ընտելութիւն և բացատրել նրանց մանրացման
կարգը:

բ) Մանրացման նախագիծը կազմելուց հետո այդ նա-
խագիծը լայն կերպով քննել կոլտնտեսականների բրիդա-
գային ժողովներում, աւետիվի ժողովում, արտադրական
խորհրդակցութիւններում, կանանց հատուկ խորհրդակցու-
թիւններում և այլն:

Մանրացման նախագիծը վերջնականապէս հաստա-
տում է կոլտնտեսականների ընդհանուր ժողովը:

Յերկրհողվարչութիւն—ԴՈՐՈՇԵՎ

Յերկրկոլտնտիւթիւթյուն—ԼՈՒՉԱՆԻՆՈՎ

ՅԵՐԿՐԵՄԱԿ ԱՆԱՍՆԱԴԱՎԱՆ ԽՈՐՀՆՏԵՍՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆԳԻ ՄԱՍԻՆ

ՀԿԿ (բ) Հ.Կովկասի Յերկրկովի վորոշումը անաս-
նապահական հանձնաժողովի 1932 թ. հունվարի 9
գեկուցման առթիւ

1

Անցած տարին հանդիսացավ յերկրամասի անասնա-
պահական խորհանտեսութիւնների լայն ծավալման տարի:
Մի շարք անասնապահական խորհանտեսութիւններ ունեն
բավական նվաճումներ անասունների քանակը լրացնելու,
կերը հավաքելու, շինարարութիւն, ջրամատակարարման
կազմակերպման գործերում: Բայց չնայած բարենպաստ պայ-
մաններին, յերկրամասի անասնապահական խորհանտեսու-
թիւններն ունեն մի շարք եյական թերութիւններ:—

1. Անասունների թվալրացման պլաններն իրագործ-
վել են անբավարար անասնապահական տրեստում 88 տո-
կոս, Խոզապահական տրեստում 67,3 տոկոս և Թռչնապա-
հական տրեստում 66 տոկոս:

2. Մատաղ անասունների մեծ կոտորածը և անասուն-
ների բեղմնավորման կամպանիայի, խնամքի ու կերի վատ
կազմակերպումը:

3. Շատ խորհանտեսութիւններում մինչև այժմ կերը
չի տարված անասնագոմերի մոտ, շինարարութիւնը չի
ավարտված, անասնաբակերը չեն սարքավորված, ջրատու-
թիւթյան տեղերը թերի յեն թողնված:

4. Աշխատանքն անբավարար է կազմակերպված, բան-
վորների հոսունութիւնը չի վերացված: Յերկրկովի բյուրոն
հաւակադիս նկատում է ապրանքային արտադրանքի հանձ-

ման պլանի անբավարար իրադրծումը. խոզապահական արեստը պլանն իրադրծել և 47,6 տոկոս, թռչնապահական արեստը 69 տոկոս:

2

Անասնապահական խորհրդատեսությունների ձևառային սեղոնի հիմնական խնդիրը համարելով այդ հիմնական անասունների և թե նրանց ծնունդի լրիվ պահպանումը, դրանով ապահովելով ամենամեծ չափով ապրանքային արտադրանքի լիքը, Յերկրկոմի բյուրոն պարտավորեցնում և բոլոր անասնապահական տրեստներին, ռայկոմներին բյուրոներին, խորհրդատեսությունների գիրեկտորներին և կուսկադմակերպություններին, վճռական միջոցներ ձևառելով— կադմակերպելու անասունների ձևառումը, նախապատրաստելու և կադմակերպելու գարնանային կամպանիաները (բեղմնավորում, ծնում, ցանք, խոտահունձի նախապատրաստություն և այլն):

Ա) ԽՈՋԱՊԱՀԱԿԱՆ ՏՐԵՍՏԻ ՍԻՍՏԵՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հանձնարարել գյուղչինարար մարմինն և խողապահական տրեստին, վոչ ուշ քան փետրվարի 1 ավարտել արտադրական շենքերը, հատկապես «Հոկտեմբեր», «մրցում», «Կարմիր պարտիզան», «Հարվածային» և Ռիկովի անվան խորհրդատեսություններում, պարտավորեցնելով այդ խորհրդատեսությունների գիրեկտորներին, միջոցներ ձևառ անել, համապատասխան կերպով տեղավորելու խողերը: Խորհրդատեսությունների գիրեկտորները պետք և արքացնեն խողանոցները, տեղավորելով խողամայրերն ու գոշիները (խողի ճուտերն) ավելի տաք խողանոցներում, սարքավորելով ջուր պատրաստելու, ջրելու և կերակրելու հատուկ շենքեր:

Պարտավորեցնել տրեստին և խորհրդատեսությունների գիրեկտորներին, ապահովել և հետևել կերի անտեսաբար ծախսելուն համաձայն վորոշված չափերի, հասցնելով վերջիններս յուրաքանչյուր բաժնի, բրիդադի և խողապահի: Պար-

տավորեցնել խորհրդատեսությունների գիրեկտորներին՝ Թալլ չալ հյուսթալի կերի փչացումը (ցրտահարում և վտում):

Հաշվի առնելով չրերության մեծ տոկոսը բեղմնավորման կամպանիայի անբավարար կադմակերպման հետևանքով, առաջարկել խողապահական տրեստին և խորհրդատեսությունների գիրեկտորներին ստուգել բոլոր արտադրողներին և մայրերին, հասցնելով հղիացող մայրերին 100 տոկոսի և լրիվ կերպով պահպանելով ստացած աճեցումը:

Պարտադիր իրադրծման կարգով հաստատել ապրանքային խողերի աճեցումը, հաշվելով յուրաքանչյուր խողամայրին վոչ պակաս, քան 10 գոճի տարեկան, պարտադրելով ռայկոմներին և խորհրդատեսությունների կուսկադմակերպություններին, այդ առաջադրության իրադրծումն առնել հատուկ գիրտոգության տակ:

Պարտադրել խորհրդատեսությունների գիրեկտորներին, կուսկադմակերպություններին և բանվորական կոմիտեներին, վճռական պայքար տանել խողանոցների մաքրության և խողերի ուշադիր խնամքի համար, կարողանալով դադարեցնել անասունների համաճարակը և անկումը նույնպես և անսլայման իրադրծել վորոշված աճումը և խորհրդատեսության պլանը:

Սողապահական տրեստը և անասնաբուժական տրեստը (ԲՅԴ) հունվար-փետրվար ամիսների ընթացքում պետք և ապահովեն հակաժանտախտային պատվաստումն անբարենպաստ խորհրդատեսություններում:

Բ) ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՏՐԵՍՏԻ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինկատի ունենալով, վոր անասուններին շենքերով ապահովելու դրծը հատկապես աննպաստ և (չառ խորհրդատեսություններում գոյություն ունի անասունների մի սոսի համար միայն վարախ), պարտավորեցնել խորհրդատեսությունների գիրեկտորներին և տեղական կուսկադմակեր-

պաշտօններին, ավարտել անասնաբուհերի կառուցումն անասնոցն համար, սարքավորել ժամանակավոր շենքեր, լրիվ կերպով վերացնելով անասուններին բաց յերկնքի տակ թողնելը ձմեռը: Գյուղընարար մարմինն պարտավորեցնել, ավարտել իր սկսած շինարարական աշխատանքները 32 թվի փետրվարի 1:

Ինչպիսիքները պետք է հետևեն այս վերջման իրադրությանը:

Պարտավորեցնել խորհրդատեսություններին դիրեկտորներին, կուսկազմակերպություններին և բանվորական կոմիտեներին, կազմակերպել անասունների տակափոսքի փոխադրումը ու հանձնումը, մաքրել բոլոր անասնաբուհերի ու դոմերի աղբը, բարելավել բոլոր անասունների և հատկապես ծնած կովերի ու հորթերի խնամքը և կերակրումը ապահովելով նրանց առաջին հերթին տաքացրած շենքերով:

Պարտավորեցնել խորհրդատեսություններին դիրեկտորներին, կուսկազմակերպություններին և բանվորական կոմիտեներին, 20 որվա ընթացքում անասնաբուհերը փոխադրել ամբողջ ձմրան համար անհրաժեշտ կուլիտ կերը: Ընդունելով փոխադրվող անասունների կերի չափերը, մշակել և մինչև բրիզադներն ու անասնավորադրողները հասցնել հանձնվող կերի չափերը, խիստ հետևելով նշանակած կերի ժամանակին ու ճիշտ տալուն, համաձայն վորոշված չափերի:

Հանձնարարել ռայկոմների բյուրոներին ցույց տալ ամեն տեսակի աշակցություն անասնապահական խորհրդատեսություններին—նրանց կերը մոտակա կուլտեսությունների կողմից փոխադրելու դեպքում:

Հանձնարարել խորհրդատեսություններին դիրեկտորներին, կուսկազմակերպություններին և բանվորական կոմիտեներին, հատկապես հետևել ժամանակին բաժանելու կերք, ջրերու և կերակրելու անասուններին—վատ յեղանակի ընթացքում:

Ամբողջ անասունների ջրումը լրիվ և կանոնավոր ապահովելու համար պարտավորեցնել խորհրդատեսություններին դիրեկտորներին ավարտել բոլոր ջրատեղիները (դարպասները, ջրատաշտերը, լճանը և այլն), կազմակերպել ջրոք չունեցող անասնադոմերը ջուր փոխադրելու տրանսպորտ, պարտադիր կերպով ունենալ ջրի պաշար փափախներում, բորանի դեպքում:

Հանձնարարել անասնապահական տրեստին, մինչև փետրվարի 1 անցկացնել լրիվ գույքացուցակադրում և խաբել (кнеймить) խորհրդատեսությունների բոլոր անասուններին:

Գ) ԹՈՉՆԱՏՐԵՍԻ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նկատի առնելով թռչնատրեստի խորհրդատեսությունների միանգամայն անբավարար դրուեթյունը (մասսայական անկում, անտեսաստեղծություն, դիմադրկություն)—առաջարկել թռչնատրեստին, դիրեկտորներին, կուսկազմակերպություններին և բանվորական կոմիտեներին, վճռական բեկում առաջացնել խորհրդատեսությունների աշխատանքներում հունվար ամսվա ընթացքում: Մաքրել թռչնանոցների կեղտը և ախտահանել, կանոնավոր և չափերի համաձայն կերակրել, հետևել հիվանդ թռչունի յերևալուն և անհապաղ առանձնացնել, կարգավորել խմելու մաքուր ջուրը:

Պարտավորեցնել խորհրդատեսություններին դիրեկտորներին ավարտել թռչնանոցները, սարքավորել նրանք և հատկապես խոհանոցները—սնունդ պատրաստելու համար, տաքացնել շենքերը, հետևելով թռչունների հավասարաչափ տեղավորվելուն թռչնանոցներում:

Խորհրդատեսությունների դիրեկտորներին և կուսկազմակերպություններին հատուկ ուշադրություն պետք է դարձնեն ձվաբերների առողջությանը և կանոնավոր վիճակին, անհապաղ ծավալելով ինկուբացիոն շրջանի համար նախապատրաստական աշխատանք:

Պարտավորեցնել ազխատանքներ և ծեր-
կրճողվարչության, անհապաղ ուղարկել թոշնատեսու-
տի խորհրդատեսությունները հատուկ բրիգադներ (կուսաշխա-
տողներ, անասնաբուժակներ և տեխնիկներ), խորհրդատե-
սություններն ուսումնասիրելու և վճարական բեկում առա-
ջացնելու աշխատանքներում:

Գ) ՎՈՋԻԱՐԱՏՐԵՍԻ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նկատելով ձմեռելու ավելի բավարար նախապատրաս-
տությունը վոչխարապահական սովխոզներում, պարտավո-
րեցնել տրեստին և խորհրդատեսների դիրեկտորներին, կադ-
մակերպել վոչխարների խնամքը, կերի փոխադրումը վոչ-
խարանոցները, այնպես փոր իջեցնել վոչխարների կորուս-
տը մինչև վորոշված չափը, հատուկ ուղարկություն դարձ-
նելով կանոնավոր կերակրելուն և ջրելուն, նույնպես նա-
խազդուշական միջոցներ կադմակերպել նրանց համաճարա-
կի, հատկապես ջրոսի դեմ:

Իրա հետ միասին ձմեռելու ժամանակամիջոցի կարե-
վորագույն խնդիրը համարելով խորհրդատեսությունների
վոչխարածնության նախապատրաստությունը—հանձնարա-
րել տրեստին և խորհրդատեսությունների դիրեկտորներին
մինչև փետրվարի 15 ամրապնդել լավագույն վոչխարանոց-
ներն անհրաժեշտ սարքավորումով վանդակներ, վահաններ,
լապտերներ և այլն). ախտահանել այդ վոչխարանոցները
տաս ուսուցչի նախ քան ծնելը, ընտրել հատուկ կադրեր
—խնամք տանելու ծնելու ժամանակ, անցկացնելով այդ
կադրերին կարճատեղ կուրսերով (10—15 օր):

Հանձնարարել տրեստին, այն խորհրդատեսություննե-
րում, վորտեղ տեղի չե ունենալու մասմիությունից ըն-
դունած վոչխարների ձմերային ծնումը, լրացման կարգով
մինչև հունվարի 20 սարքավորել բավական քանակությամբ
տաք շենքեր, տաքացնել վոչխարանոցները և այնտեղ փո-
խադրել ծնող վոչխարներին:

3.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՄԱՆ ԱՍՊԱՐԻՋՈՒՄ

Նկատելով համարյա ամենուրեք աշխատանքի կադ-
մակերպության հրահանգի անիրագործումը խորհրդատեսու-
թյուններում, շատ դեպքերում դրա մասին յեղած կանոնների
խառնաշփոթությունը—պարտավորեցնել անասնապահական
տրեստների դիրեկտորներին, համապատասխան արհմիու-
թենական կադմակերպությունների հետ համաձայնեցնելով,
հավաքական պայմանագրեր կապելիս ապահովել բանվոր-
ների մինչև 75 տոկոսի գործավարձային աշխատանքին
անցնելը, վերջացնելով այդ աշխատանքն յերկու յոռուս-
յակներին ընթացքում և տալ տեղերին ամենամեծ չափով
պարգևեցրած հրահանգ գործավարձի մասին—աշխատանքի
քանակական և վորակական ցուցիչների համապատասխան
(աբտադրանքի յեղը, կթումը), կորուստների պակասումն և
այլն, մացնելով աշխատանքի ձիշտ հաշվառում (աղյուսակ):

Պարտավորեցնել ռալոնական կուսակցական և արհ-
միութենական կադմակերպություններին, լայն մշակել այդ
հարցը խորհրդատեսությունների բանվորական ժողովներում
և արտադրական խորհրդակցություններում:

Նկատելով խորհրդատեսությունների բանվորների մեծ

հոսունությունը, պարտավորեցնել խորհրդատեսությունների
դիրեկտորներին, հաստատել—

ա) յուրաքանչյուր խորհրդատեսության աշխատողների
հիմնական կադմը, հիմնվելով տրեստների ունեցած չափերի
վրա (անասնապահական տրեստի 50 անասունին մի մարդ,
փոխանակ ներկայումս գոյություն ունեցող մի մարդու յու-
րաքանչյուր 10 անասունի համար):

բ) ամրացնել համապատասխան բանվորներին, նրանց

պատասխանատվութեամբ անասունների խմբերը, խողանոցների բաժիններն և այլն:

դ) Անասնապահական խորհրդատեսուծիքուններում, վորտեղ կան վոչ պակաս քան, 300 մշտական բռնվորներ, կազմակերպել բանկոտպներ և ճաշարաններ: Յերկրկոտպմիութուն և Յերկրկոտպունդը պետք է այդ վորոշումն իրագործեն 20 օրվա ընթացքում:

Կազմակերպել խորհրդատեսուծիքունների բոլոր հիմնական մասերում և կենտրոնական աղարակներում բանկոտպների խանութներ:

Խորհրդատեսուծիքունները 1932 թվի շինարարութեան պլաններում պիտի մտցնեն անասնապահական խորհրդատեսուծիքունների բանվորների համար հանրակացարաններ և բնակարաններ շինելը խորհրդատեսուծիքան հողամասերում:

4.

ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պարտավորեցնել խորհրդատեսուծիքունների դիրեկտորներին, ապահովել մասնագետների նյութական-կենցաղային պայմանների բարելավումը խորհրդատեսուծիքուններում (բնակարաններով և այլն), պարտավորեցնելով մարդկոտների և ռալկամներին, հատկապես հետևելու այդ վորոշման իրականացմանը:

Յերկրկոտպմիութունը պետք է կազմակերպի մասնագետների հատուկ մատակարարում այն կոտնտեսութուններում, վորտեղ կազմակերպվելու յեն բանկոտպներ (3 բաժնի 3-րդ կեսի համաձայն):

5.

ԿԱԴՐԵՐԸ

Նկատելով, վոր խորհրդատեսուծիքունները չեն լրացված հիմնական ղեկավարող վարչական-տեխնիկական կադրերով, հանձնարարել կադրերի բաժնին, զորահավաքել քաղաքներից վոչ պակաս, քան 200 մարդ, աշխատելու համար անասնապահական խորհրդատեսուծիքուններում: Բացի այդ, բաշխիչ բաժինը պետք է կազմակերպի պահեստի կադրեր 100

մարդու չափ, լրացնելու մանրացող անասնապահական խորհրդատեսուծիքունների ղեկավարող կադրերը: Սրգելել ռալկոմներին, հետ կանչելու անասնապահական խորհրդատեսուծիքուններից կոմունիստներին և մասնագետներին:

Ի նկատի առնելով, վոր խորհրդատեսուծիքունների բերդադիրների ու բանվորների կազմում անգրագետներ կան, առաջարկել Յերկրկուտպմիքունին, բոլոր խորհրդատեսուծիքուններում ծավալել անգրագիտութեան վերացման աշխատանքներն այն հաշվով, վոր ձեռնով աւիտների ընթացքում անգրագիտութեունը լրիվ վերացվի խորհրդատեսուծիքունների բերդադիրների և բանվորների միջից:

Նկատել, վոր աշխատանքի Յերկրբաժինը չի իրագործել Յերկրկոմի պլենումի վորոշումը, 500 վորակավորված բանվորներ ուղարկելու անասնապահական սիստեմները խորհրդատեսուծիքունների մյուս սիստեմներից, իսկ Յերկրբոլվարչութեունը—150 մասնագետների զորահավաքը: Պարտավորեցնել Յերկրբոլվարչութեան, կենդանաբանական ինստիտուտի առաջին հերթական շրջանավարտներից թողնել յերկրամասի անասնապահական խորհրդատեսուծիքունների համար անհրաժեշտ քանակութեամբ աշխատողներ: Աշխատանքի Յերկրբաժինը և համապատասխան սիստեմների խորհրդատեսուծիքունների դիրեկտորները մի ամսվա ընթացքում պետք է իրագործեն Յերկրկոմի պլենումի վորոշումը 500 վորակավորված բանվորներ զորահավաքելու վերաբերյալ անասնապահական սիստեմներում—խորհրդատեսուծիքունների մյուս սիստեմներից:

Պարտավորեցնել տրեստների դիրեկտորներին, 500-ից ավել բանվորներ ունեցող բոլոր անասնապահական խորհրդատեսուծիքուններում հանձնարարել խորհրդատեսուծիքան դիրեկտորի տեղակալներից մեկին աշխատանքի և կադրերի ղեկավարութեունը:

Պարտավորեցնել տրեստներին և խորհրդատեսուծիքուններին դիրեկտորներին 32 թվի պատրաստման և վերապատ-

բաստման պլանի համաձայն, անցկացնել կուրսային սխա-
տեմով խոզապահական տրեստից 9.103 մարդ, վոչխարապա-
հական տրեստից 8.567 մարդ և թռչնապահական տրեստից
2.254 մարդ, զանազան վորակավորումներով ծավալելով
կուրսերի աշխատանքը մի տասնորյակի ընթացքում: Հանձ-
նարարել Յերկրհողվարչության, հարց բարձրացնել հողփող-
կոմի առաջ, արագացնել կուրսերի կազմակերպման միջոց-
ների բաժանումը:

Անհրաժեշտ համարել, վոր խոզապահական տրեստի և
անասնապահական տրեստի խորհրդատեսությունների կու-
սակցական կոմիտեների քարտուղարները հաստատումը և
հանումը կատարել Յերկրհողմն ամենամիտ ժամանակում:

Առաջարկել անասնապահական խորհրդատեսություննե-
րի միության յերկրային կոմիտեյին և ռալոնական կոմի-
տեներին ամրացնել բանվորական կոմիտեների նախագահ-
ների կազմերը և վերացնել արհմիութենական աշխատող
կազմերի անթույլատրելի հոսունությունն անասնապահա-
կան խորհրդատեսություններում:

Հանձնարարել կուսակցության ռալոններին, արհմիու-
թենական կազմակերպությունների և ԲԳՏեսչության մար-
մինների մասնակցությամբ սխտեմատիկ հետևել և պայ-
քարել խորհրդատեսություններն անհարադատ տարրեր մշտ-
նելու գիմ:

6.

ՏՆՏԵՍԱԾՎԱՐԿԻ ՀԱՐՑԵՐ

Նկատելով, վոր տնտեսաշվարկը փաստորեն բացա-
կայում է խորհրդատեսություններում, հատկապես առանձին
հողամասերում, բացակայում է տնտեսության անհրաժեշտ
հաշվառումը, անթույլատրելի բարձր է մթերքների և անա-
սունների պահելու ինքնարժեքը—պարտավորեցնել տրեստ-
ների ղեկավարներին, անհապաղ կազմակերպել հատուկ
բրիգադներ, մոցնելով մասնագետ հաշվետարներ, ոգնելու
խորհրդատեսությունների ղեկավարներին հաշվառումը կանո-

նավորելու և իսկական տնտեսաշվարկ անցկացնելու հա-
մար խորհրդատեսություններում:

Ապահովել, վոր բոլոր խորհրդատեսությունները հոռն-
վարի ընթացքում տնցնեն իսկական տնտեսաշվարկին
նույնպես և խորհրդատեսությունների առանձին մասերը,
կազմակերպել ամբողջ գործողության և տնտեսության իս-
կական հաշվառք, իջեցնել տնտեսության ծախսերն այն-
պես, վոր ապահովեն արտադրանքի ինքնարժեքի կտրուկ
իջեցումը և տնտեսության շահավետ աշխատանքը:

7.

ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Միանգամայն անհրաժեշտ համարել արագացնել ավե-
լի խոշոր և մի քանի ռալոնների հողամասերում տարած-
ված անասնապահական խորհրդատեսությունների մանրա-
ցումը, հանձնարարել Յերկրհողվարչության և տրեստներին,
մանրացումը կատարել յերկու ամսվա ընթացքում:

8.

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ ԱՐԶՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Պարտավորեցնել կուսակցության ռալոններին, մոտ
ժամանակում արմատապես բարելավել կուսակցական-կազ-
մակերպչական և կուսակցական-մասսայական աշխատան-
քըն անասնապահական խորհրդատեսություններում, ամրաց-
նել կուսաշխատողների միջոցով խորհրդատեսությունների
մասերը, ծավալել Մարքս-Լենինյան դաստիարակությունը,
բարձրացնելով կուսակցական շիրտը և կազմակերպելով
կուսակցական ու կոմյերիտական բջիջներ խորհրդատեսու-
թյունների բոլոր մասերում:

Հանձնարարել կազմաբաժին, տաս ուղվա ընթացքում
ընտրել Յերկրհողմի 10 կազմակերպչական կուսխմբակներ,
ոգնելու տեղական կազմակերպություններին, աշխատելու
համեմատաբար խոշոր անասնապահական խորհրդատեսու-
թյուններում ձմռան և դարնան ընթացքում:

Պարտավորեցնել անասնապահական խորհանդեսներին, թյունների արհմիություններին, ուժեղացնել անասնապահական խորհանդեսներին, թյունների բանվորական կոմիտեներին հրահանգական ոգևությունը և ծավալել սոցմրցման ու հարվածայնության աշխատանքները և մասնավորապես ծավալել անասունների փոխադրության և այլն անտեսանելի վարկային սոցմրցման բարձր ձևերը:

9.

ՄՔԵՐՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Պարտավորեցնել խորհանդեսներին զերեկտորներին, կուսակցական և արհմիութենական կազմակերպություններին, վճռական կերպով պայքարել աշտպես կոչված՝ հարկադրված մորթումների դեմ, պարտավորեցնելով խորհանդեսներին զերեկտորներին, հարկադրված մորթումից ստացած արտադրանքն ոգտադրոճել առաջին հերթին մթերումների կենտրոնացած պլանի իրականացման համար, վոչ մի դեպքում թույլ չտալով վորոշված չափից ավել ծախսել խորհանդեսության ներքին պահանջների բավարարման համար:

10.

Իբրև լրացում Ֆերկրկոմի քարտուղարության վորոշման, թոչնապահական տրեստի նախկին լրագոր ընկեր Չուժաչենկոյին աշխատանքից հանելու վերաբերյալ, հանձնարարել դատախազին, յենթարկել ընկեր Չուժաչենկոյին պատասխանատվության, թոչնատրեստի աշխատանքներում խայտառակություններ թույլ տալու համար:

Թոչունների անթույլատրելի ծախսման և անտեսանելի վարության համար աշխատանքից հանել և դատի տալ Գեորգեվսկի ինկուբատորային կայանի զերեկտոր ընկեր Յուդայիլին. կուսակցության մեջ նրա հետագա մնալու հնարավորության հարցը հանձնել Ֆերկրվերահսկիչ հանձնաժողովին:

Հանցավոր անտեսանելի վարության համար (անասուն-

ների անկում և կորուստ) դատի տալ № 76 «Սկոտովոր» խորհանդեսներին, նախկին զերեկտորներ ընկերներ Բաբկինին և Սպազոդին:

Շախտի ռայոնի «Հարվածային» խորհանդեսության զերեկտոր ընկեր Ժուկովսկուն հանել աշխատանքից, ներմուծված անասնամայրերին անբավարար չափով պահպանել համար:



ՀՀ Ազգային գրադարան



NL0203994

Ответственный редактор
А. Г. Авакян
Технический редактор
Г. М. Маркрян

№ 2081
1932 г.

Сд. в набор 31/II—1932 г.
Сд. в печать 14/II—1932 г.
Объем 1 печ. лист
Тираж 2000 экз.

Крайст № А 1080. Газетно-книжная тип. СККПО. Ст. формат Б6 125x176
Ростов н-Д. Заказ № 547 Знакев 59000

29.919

На армянском языке

РЕШЕНИЯ КРАЕВЫХ РУКОВОДЯЩИХ
ОРГАНОВ—В МАССЫ

1. Об укреплении колхозов.
Крайком ВКП(б), КИК и КрайКС.
2. О порядке разукрупнения колхозов.
КрайЗУ и Крайколхозсоюз.
3. О животноводстве
Крайком ВКП(б).



И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

Հ.ՐԱՊԱԶԵՍԵՐ՝

ԴՈՍՏՈՎ-ԴՈՆ, ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ., 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՅԵՆՏՐ)